յետոյ, նախապատմական եւ պատմական շրջաններում կերտուած նախ կոկուած, տաշուած, ապա սրբատաշ եւ յղկուած քարերով շինուածները, որոնք նկատելի են հնումն՝ անչաղախ, ապա կրաշաղախ որմերի պատերի եւ տաճարների կազմուածքում, կոթծանուած բերդերի եւ աշտարակների շուրջը։ Սա է անառիկ անմատչելի Պահլաւների այն որոշանը, որ եղել է, ըստ Խորենացու, մառախլապատ անտառներում, արծաթապատ լճակներով եւ ճահիճներով պատուած լեռների լանջերին, արաղահոս առուակների խորխոր ձորերում եւ բարեբեր հովիտներում։

Պահլաւների բնավայր կալուածքը այս Բահլը պիտի լինի եւ ո՛չ ուրիշ տեղ։ Գրիգոր Լուսաւորչի հայր Անակը Սասանեան Արտաշիրից այս Պահլաւ երկիրն էր պահանջում, իր քրմապետ, մոգպետ պապերի, պատերու պապերի կալուածները, որին անմիջական տէր եւ ժառանգ էր համարւում Լուսաւորչի տոհմը։ Փաստերը ցոյց են տալիս, որ Անակի պահանջած կալուածքը այս Բահլն է, վէճը այս փահլաւանների երկրի համար է։ Խորենացու նկարագրած «Ստորոտովն Պարխարայ» ընդ մէջ Տայոց ի գիջին եւ ի մառախլապատ տեղիս մայրացն եւ լոռաւէտս»։ (Բ։ գիրք, 2 գլ։) ամբողջապէս ցոյց է տալիս այս Բահլը։ Տոհմական կալուածն այս է, որ Վաղարշակ Պարթեւ-Պահլաւը իր պա-